




ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

## ԵՐԿՈՒ ՀԱՅՐ

1896-ի կոտորածի ձմեռն էր: Մի խումբ փախստականներ Սասունի կողմերից հասան Էջմիածին: Նրանց մեջն էր ծերունի տեր Սարգիսը:

— Հայրիկի Աջը կուգեմ համբուրել,— խնդրեց նա վեհաբանում, ու ներս թողին:

— Բարով, տեր հայր,— Աջը մեկնեց Հայրիկը:

Քահանան համբուրեց ու ետ եկավ, կանգնեց դահլիճի մեջտեղը հոգնած, խորտակված:

— Ո՞րտեղից կուգաս:

— Սասունի կողմերեն, ես Ա-ի տեր Սարգիսն եմ...

— Ա-ի տեր Սարգիսը...

— Այո՛, Հայրիկ:

— Է՞...

— Ես քսան հոգուց գերդաստան ունեի, Հայրիկ. տղաներս կոտորեցին, հարսներս տարան, թոռներս կորան, տունս թալանեցին, վառեցին. մնացի այսպես...

— Է՞ հիմի...

— Ես ոչինչ չեմ ուզում, Հայրիկ, ես... այնպես եկել եմ... եկել Հայրիկին ասեմ... Էլ ոչինչ չեմ ուզում...

Ու Հայրիկի առջև կանգնած էր մարդը, որ ամեն ինչ կորցրել էր ու ոչինչ չէր ուզում: Երկուսն էլ լուռ էին:

— Քանի՞ որդի կորցրիր, տեր Սարգիս,— գլուխը վեր քաշեց կաթողիկոսը:

— Ամենքը միասին քսան, Հայրիկ:

— Դու քսան որդի ես կորցրել, իսկ ես քսան հազար,— պատասխանեց Հայրիկը,— այդ էլ քսան՝ եղավ քսան հազար ու քսան... Ո՞ւմն է շատ, տեր Սարգիս...

Քահանան ցնցվեց ու լուռ կանգնած էր:

— Ո՞ւմ վիշտն է մեծ, տեր Սարգիս:

— Հայրիկինը...

— Դե ե՛կ, տեր Սարգիս, մոտ եկ, աջդ դիր գլխիս, աղոթիր, օրհնիր, որ այս վշտին դիմանամ:

Ասավ ու գլուխը խոնարհեց:

Քահանան շտապեց առաջ, աջը դրավ իր Հայրապետի գլխին, սկսավ աղոթք մրմնջալ ու աչքերը լցվեցին արտասուքով...

Նա օրհնում էր Հայոց կաթողիկոսի՛ն... նրա առջև խոնարհած էր Հայոց Հայրիկը...

(Թիֆլիս, 6(19) նոյեմբերի 1907 թ.)